Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Մայակովսկու Հ. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկա (7 դասաժամ) , ֆիզկուլտուրա (18 դասաժամ) և քիմիա(10 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3. անձը հաստատող փաստաթուղթ,

4.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

5.ինքնակենսագրություն (Ձեւ 5),

6.այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7.ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9.որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:
Փաստաթղթերը ընդունվում են օգոստոսի 23 -ից մինչև սեպտեմբերի 5-ը ներառյալ,ամեն օր ժամը 10.00-15.00 -ը,բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 9 -ին՝ ժամը 14.00-ին ՀՀ Կոտայքի մարզի «Մայակովսկու Հ. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (095) 343277, (0222) 60145 հեռախոսահամարներով: